

**ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՎԵՐՋԱՍՏԱՆՏԵՐԻ  
ԳՈՐԾԱԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

**Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Ածանցումը եղել է մնում է գրական հայերենի ամենագործուն բառակազմական եղանակը: Դրա վկայությունն այն է, որ ածանցավոր բառերը, ուսումնասիրողների միահամուտ պնդմամբ, հայերենի բաղադրյալ բառերի գերակշիռ մասն են կազմում:

Իսկ ինչպիսի՞ն է վիճակը արդի մամուլում, որո՞նք են այսօր լրագրության մեջ ամենից ավելի գործածական ածանցները: Այս հարցին պատասխանելու համար կատարել ենք վերջին շրջանում համեմատաբար շատ կարդացվող մի քանի թերթերի, ինչպես նաև «Ռուս - հայերեն պոլիտեխնիկական բառարանի» ածանցավոր բառերի վիճակագրական հաշվառում և ուսումնասիրություն:

Նախ դուրս ենք գրել «Առավոտ» լրագրի մեկ համարի (13 հոկտեմբերի, 2000 թ.) բոլոր ածանցավոր բառերը: Ստացվել է վիճակագրական հետևյալ պատկերը՝ ըստ ածանցների գործածության հաճախականության. **-ուրյուն՝ 294, -ական՝ 167, -ում՝ 158, -յան՝ 70, -ային՝ 52, -ան՝ 31** բառ, մյուսները՝ ըստ նվազող հաճախականության:

Տվյալներից երևում է, որ թերթի այդ համարում ամենից գործածական ածանցներն են **-ուրյուն**-ը, **-ական**-ը և **-ում**-ը, այնուհետև՝ **-յան**-ը, **-ային**-ը և մյուսները: Այս տվյալները ստուգելու և ածանցների գործածության հաճախականության միտումները բացահայտելու համար էլ հինգ տարբեր թերթերից՝ «Ազգ», «Առավոտ», «Գրական թերթ», «Իրավունք», «Հայաստանի Հանրապետություն», ինչպես և «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանից» դուրս ենք գրել իրար հաջորդող հարյուրական ածանցավոր բառեր, որոնց մեջ ածանցների հաճախականության պատկերը հետևյալն է.

	-ուրյուն	-ական	-ում	-ային	ան-	-որեն	-անք	-յան	-ավոր	-ի	-ապես
«Առավոտ» 100 բառ	28	12	18	11	7	5	3	1	2	-	1
«Իրավունք» 100 բառ	30	19	9	9	10	6	3	1	3	3	1
«Ազգ» 100 բառ	32	14	16	7	8	1	-	6	5	1	1
«Հայաստանի Հանրապետ.» 100 բառ	17	25	17	5	10	-	-	-	5	-	5
«Գրական թերթ» 100 բառ	21	4	7	3	8	4	4	2	6	5	2
«Առավոտի» 1 համարը ամբողջ.	294	167	158	52	31	11	21	70	19	16	15
«Ռուս-հայերեն պոլիտեխնիկ բառ.»-ի 1 տառը	44	5	52	19	-	-	-	1	2	22	-
(Ընդամենը	466	246	277	151	74	27	31	81	42	47	25

Այժմ ավելի հանգամանորոն ուսումնասիրենք մեր ընտրանքում հանդիպած ածանցները՝ դրանք ներկայացնելով ըստ իրենց գործունության աստիճանի և բառակազմական նշանակության:

**-ՈՒՐՅՈՒՆ**-ը ժամանակակից հայերենում ամենից տարածված ու ամենագործուն ածանցն է: Մի քանի խոսքի մասերի բառակազմական հիմքերից (ածական, գոյական, բայ) այն կազմում է գերազանցապես վերացական իմաստ արտահայտող գոյականներ: Ուսումնասիրությունից պարզվում է, որ ածական բառակազմական հիմքերից **-ուրյուն** ածանցով գոյական կերտող բաղադրություններն ունեն «նախատիպի ցույց

տված հատկանիշի անունը՝ որպես ընդհանուր բառակազմական նշանակությունը՝

Որպես այդպիսի նախատիպեր՝ մեր ընտրանքում առկա են՝

1. Արմատական ածականներ: Օր.՝ *ագատություն, առատություն, արդարություն, դաժանություն, դժվարություն, հարթություն* և այլն:

Սրանց մի մասը նախորդ մասնագետները համարել են նաև բայից բաղադրվածներ, ինչպես՝ *կարմրություն // կարմիր լինելը* :

2. Վերջածանցավոր բաղադրական հիմքեր: Սրանք, բնականաբար, արմատից և վերջածանցից կազմված հիմքերն են, ինչպես՝

... -ական - *բավականություն, զգացականություն, ընկերականություն, հավաքականություն, հերթականություն, մշտականություն, պատմականություն,*

... -ելի - *ապացուցելիություն, լսելիություն, հարգելիություն, ողորմելիություն, պատժելիություն, ուսանելիություն,*

... -ող - *դատողություն, դիտողություն, լսողություն, կարողություն, կրկնողություն, մարտողություն,*

... -ված - *բուժվածություն, լարվածություն*

... -ային - *զգացմունքայնություն, մարդկայնություն* և այլն:

3. Բարդ ածական բաղադրական հիմքեր: Հասկանալի է, որ այս դեպքում -*ություն*-ը բաղադրվում է կազմությամբ բարդ ածականների հետ, ինչպես՝ *արդարադատություն, լավատեսություն, հետաքրքրասիրություն, ճշմարտապահություն* և այլն:

- *Ություն* վերջածանցը մեր ընտրանքում մի շարք բայահիմքերից ու բայարմատներից կազմում է բայանուններ: Մ. Աբեղյանն այս կապակցությամբ ունի մի հետաքրքիր դիտարկում. բնույթով «հին» լեզվի մեջ -*ություն* ածանցը հաճախ ցույց է տալիս նաև գործողություն, շատ բայերից -*ուժն* ածանցով կազմություններ չկան, այլ միայն -*ություն* ածանցով, որը գործածվում է նաև -*ուժն* ածանցի նշանակությամբ: «Նոր» լեզվի մեջ ևս կա այս կիրառությունը, բայց հետզհետե իրրև գործողության անուն գործածվում է -*ուժն* ածանցը, իսկ -*ություն* ածանցը տարբերակումով ցույց է տալիս հատկություն, դրություն, կատարված գործողության մնալուն հետևանք, իրրև վիճակ կամ առնչվում մի այլ նշանակությամբ»<sup>1</sup>:

Խնդրին անդրադարձած Ս. Գալստյանը նկատել է, որ *բայ + ածանցակերտ* կադապարում «որպես նախատիպեր դրվում են բայարմատներ կամ բայաբներ կամ բայական բառակապակցություններ, կամ նրանց համաբանությամբ՝ վերջին բաղադրիչ բայարմատով նախատիպ հիմքեր, ինչպես՝ *ընկերություն, զինավարժություն, խաղարկություն*»<sup>2</sup>:

Մեր ընտրանքում այս կադապարով կազմության բայանունների օրինակներից են՝ *լոռություն // լոռելը, լսողություն // լսելը, հոգնածություն // հոգնելը, հսկողություն // հսկելը, ներողություն // ներելը* և այլն:

- *Ական* ածանցը մեր ընտրանքում գոյականական, բայական, ածականական նախատիպերից կազմում է ածականներ:

Գոյականական նախատիպերից -*ական* ածանցը կազմում է «նախատիպի գոյականին վերաբերող՝ հատուկ, նախատիպ գոյականի» ընդհանուր նշանակություն արտահայտող ածականներ: Այս կադապարում մեր ընտրանքում որպես նախատիպեր հանդես են գալիս.

1. Անձերի հատուկ անունները և կուսակցությունների անունները (հաճախ հապավված ձևով). -*ական* ածանցով ածականները, բացի «նախատիպին պատկանող հատուկ» ընդհանուր իմաստից, արտահայտում են նաև «նախատիպ գոյական անձի անվան հետ կապված գաղափարական ուղղություն, հոսանքի կողմնակից, նրա հատկություններն ունեցող» բառակազմական նշանակությամբ:

<sup>1</sup> - *Ություն*, - *ուժն*, - *ական* ածանցները բնութագրելիս հիմք ենք ընդունել Ս. Գալստյանի «Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում» աշխատության համապատասխան դրույթները, Եր., 1978:

<sup>2</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 169:

<sup>3</sup> Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1978, էջ 169:

2. Աճձերի հատուկ անուաներ՝ «Ճախատիպի ցույց տված գոյականին հատուկ, վերաբերող» ընդհանուր բառակազմական նշանակությամբ: Նման կազմություններ են՝ *ախմական, լեռնական, հիշական* և այլն:

Որպես ճախատիպեր օգտագործված հիմքերի մեջ կան զբաղմունքի, պաշտոնների (բուժքույրական, գուսանական, դասախոսական, զինվորական, նկարչական և այլն) անուններ, տիտղոսների, հասարակական խավերի ներկայացուցիչների անուններ (գեներալական, ճախարարական, սպայական և այլն), ազգականական հարաբերություն ցույց տվող անձի հասարակ անուններ (հայրական, մայրական, որդիական, պապական և այլն):

3. Տեղանուններից -*ական* ածանցով կազմվող ածականներն արտահայտում են «ճախատիպ գոյականի ցույց տված տեղին, վայրին հատուկ, տվյալ տարածքում գտնվող» բառակազմական նշանակություն: Օր.՝ *արարական, թուրքական, հայկական, տաջիկական, պարսկական* և այլն:

4. Նույն կարգի անուններից ճախատիպ հիմքերի յուրահատուկ «փոխադարձ» հարաբերությամբ կապված հատվածական բարդությունների մեծ մասը ևս կազմվում է - *ական* ածանցով: Օր.՝ *հայ-պարսկական, ռուս-թուրքական, ռուս-ճապոնական* և այլն:

5. Սովորական կազմություններ են բացարձակ թվականներից - *ական* ածանցով կազմված բաշխական թվականները. օր.՝ *երկուական, մեկական, տասական* և այլն:

Կազմության տեսակետից -*ական* ածանցի համար որպես ճախատիպեր առկա են արմատական ածականներ՝ *ամբողջական, լայնական, սովորական* և այլն, վերջածանցավոր ճախատիպեր՝ *հավիտենական, չափավորական, ստուգողական* և այլն, բարդ և բարդ ածանցավոր ճախատիպեր՝ *արդյունաբերական, լուսատպագրական, շահադիտական, տնտեսվարական* և այլն. ճախածանցավոր ճախատիպեր՝ *անհատական, անպարբերական, անտիրական, ապօրինական, հակաստողական, հակաօրինական, համանվանական* և այլն:

6. Հայական ճախատիպերից -*ական* ածանցով բաղադրություններն ունեն «ճախատիպի արտահայտած գործողությունը կատարելու ընդունակ, կարող, գործողությամբ կատարող, այն որպես կայուն հատկանիշ ունեցող» ընդհանուր բառակազմական նշանակություն. օր.՝ *բաշխական* (բաշխել բայից), *ենթադրական* (ենթադրել բայից), *հուսադրական* (հուսադրել բայից), *վճռական* (վճռել բայից) և այլն:

Մեր ընտրանքում գործունության տեսակետից երրորդ ածանցը -*ում-ն* է: Այն գործողության անուն գոյականներ կազմող ամենագործուն ածանցն է ժամանակակից հայերենում: Որպես ճախատիպեր՝ մեր ընտրանքում դրվում են տարբեր կառուցվածքների բայեր, ինչպես՝

1. Ե խոնարհման պարզ (ներածանց չունեցող) բայեր՝ *ագուցում, ականազերծում, գործում, գրավում, իրագործում, հողմահարում, քարահատում* և այլն:

2. Ա խոնարհման պարզ և Ե խոնարհման պատճառական բայեր՝ *բանեցում, բարձրացում, բթացում, բնակեցում, դարձում, զգացում, լվացում* և այլն:

3. Ան սուկածանց ունեցող Ա խոնարհման բայեր՝ *գոհացում, ժողովրդականացում, խորթացում, ուռճացում, փարթամացում* և այլն:

4. Ան սուկածանց ունեցող Ե խոնարհման պատճառականի հին հիմքերով բայեր՝ *ծանուցում, ջնոցում, սնուցում, ուսուցում* և այլն:

5. Են սուկածանց ունեցող Ա խոնարհման բայեր՝ *կամեցում, հագեցում, մերձեցում, մոտեցում* և այլն:

6. Ն և 2 սուկածանց ունեցող բայեր՝ *անցում, դիպում, հարցում* և այլն:

Ածանցների հաճախականությունը գրական լեզվի գործառական տարբեր ոլորտներում տարբեր է անշուշտ: Դա ակնառու երևում է, երբ համեմատում ենք մեր ուսումնասիրության տվյալները:

Լրագրության լեզվի տվյալները դասակարգելիս ստացվել է հետևյալ պատկերը. - *ություն* ածանցով կազմված բառերը 128-ն են, որոնցից 28-ը՝ «Առավոտում», 30-ը՝ «Իրավունքում», 32-ը՝ «Ազգում», 17-ը՝ «Հայաստանի Հանրապետությունում», 21-ը՝ «Գրական թերթում»:

Վիճակագրական տվյալներ ենք հավաքել նաև «Թուս - հայերեն պոլիտեխնիկական բառարանի» «Հայ - ռուսերեն պոլիտեխնիկական բառարանի» մասից: Բառարանի Դ տառի տակ գետեղված 224 ածանցավոր բառերից *-ույթյուն* ածանցով կազմված են 44-ը, որոնք իրենց գործառությամբ տարբերվում են լրագրության մեջ մեզ հանդիպած բառերից: Դրանք մեծ մասամբ եզրույթներ են, ինչպես՝ *դաբաղվածություն, դատարկամիջություն, դարձատևողություն, դարձափոխություն, դարձունակություն, դիմադրաչափություն, դիմազրկություն, դյուրանեղություն, դյուրամշակելիություն* և այլն:

*-Ական* ածանցով կազմված բառերը 246-ն են, որոնցից միայն 167-ը՝ «Առավոտ» թերթի մեկ համարում, 25-ը՝ «Հայաստանի Հանրապետություն», 19-ը՝ «Իրավունք», 14-ը՝ «Ազգ», 12-ը՝ «Առավոտ», 4-ը՝ «Գրական թերթ» պարբերականների առաջին հարյուր ածանցավոր բառերի շարքում՝ *արդիական, անանձնանվանական, արժեքական, մասնական, վարժապետական, տրամաչափական* և այլն:

«Հայ - ռուսերեն պոլիտեխնիկական բառարանի» մեր ուսումնասիրած հատվածում դրանք չնչին քանակ են կազմում. ընդամենը հիմնք են՝ *դասական, դիմագնիսական, դիմադրական, դիտողական, դրական*. սրանք ածականներ են և կարող են հանդես գալ որպես բազմաբարդ տերմինների որոշչալին բաղադրիչ:

Այլ է պատկերը *-ուս* ածանցի դեպքում: Չնայած հիշյալ լրագրերից մեր դուրս գրած բառերի մեծամասնությունը *-ույթյուն* ածանցով է կազմված, բայց ահա «Հայ - ռուսերեն պոլիտեխնիկական բառարանում» ավելի շատ են *-ուս* ածանցով կազմված բառերը:

Մեր դուրս գրած բառերից 52-ը կազմված են *-ուս*-ով, իսկ *-ույթյուն*-ով կազմվածները 44-ն են: Ըստ մասնույից դուրս գրած օրինակների՝ ձևավորվել է վիճակագրական հետևյալ պատկերը. «Առավոտ» թերթի ամբողջական համարում կա 158, մյուս հիմնք թերթերի ածանցավոր բառերի ընտրանիում հանդիպում են՝ «Առավոտում» *-ուս*-ով կազմված 18, Հայաստանի Հանրապետությունում՝ 17, «Ազգում»՝ 16, «Իրավունքում»՝ 9, «Գրական թերթում»՝ 7 բառեր:

Սա բացատրվում է նրանով, որ արդի հայերենի հասարակագիտական, առավել ևս՝ գիտատեխնիկական տերմինների սովոր մասը գործողության անուններ են, իսկ *-ուս*-ը բայանուն կազմող ամենագործուն ածանցն է:

Մասնույից քաղած մեր օրինակներում բավական հաճախ են հանդիպում նաև *-անք, -յան, -ալոր, -ան, -որեն* ածանցներով կազմված բառերը, որոնք, սակայն, չկան «Հայ - ռուսերեն պոլիտեխնիկական բառարանում»: Փոխարենը բառարանում մեծ թիվ (27) են կազմում *-իչ* ածանցով բաղադրված բառերը՝ *դաբաղիչ, դանդաղաչափիչ, դարձափոխիչ, դարսակիչ, դիտարկիչ, դիրտանստեցուցիչ, դողամամիչ, դոնդողագոյացիչ, դրոշմամիչ, դրոշմափայլարդիչ, դրոշմիչ* և այլն:

Հայտնի է, որ *-իչ* ածանցը գործուն է Բա 1 և Բա 2 կաղապարներում, այսինքն՝ բայահիմքերից ու բայարմատներից այն կազմում է գոյական և ածական անուններ:

*-իչ* ածանցով բաղադրվածները ընդհանրապես կարող են լինել թե՛ ածականներ, թե՛ գոյականներ: Դրանք «Հայ - ռուսերեն պոլիտեխնիկական բառարանում» գոյականներ են, քանի որ գիտատեխնիկական տերմիններ են:

Այսպիսով՝ ածանցումը արդի հայերենի լեզվաշինության և հատկապես գիտատեխնիկական տերմինաբանության ստեղծման գործում կարևոր դեր է կատարում՝ ըստ որում տարբերակվելով գրական լեզվի հրապարակախոսական և գիտական ոլորտներում:

**А. С. МУРАДЯН - К вопросу о частотности употребления суффиксов в современном армянском языке.** - На основе изучения текстов, опубликованных в ряде армянских газет за последние пять лет, автор статьи показывает, что в современном армянском языке суффиксы *-ություն, -ական, -ուս* являются наиболее распространенными. Научная характеристика частотности употребления этих суффиксов дана в составленной автором таблице, которая отражает главные тенденции развития словообразования в современном армянском языке.